

բամբաստողի վրայ «չգայրանալ ու անոր չընդդիմանալ, այլ ծիծաղիլ կամ ֆաղցր ու համոզիչ խօսքերով սեփական անմեղությունն ցոյց տալ»: Ինչքան համբերություն, կամֆի տոկունություն, հոգիի արիություն եւ վեհանձնություն պետք է լռեցնելու բամբաստողը՝ առանց խօսքի, եւ կամ հակառակը՝ ֆաղցր ու մեղմ խօսքով: Արդարեւ, շատ փչեր պիտի ցուցաբերէին ասպետական

վերաբերմունք եւ մեծհոգություն՝ գժուճ մարդկանց ոչնչությունն ու անարժեքությունը արհամարհելու համար: Պատուական հեղինակը, «Բամբասանք» գլխի վերջաւորութեան, շատ իմաստալից խրատով կը թողու ընթերցողը. «Ով կրնայ տեսնել իր թերութիւնները, այդքան չի կրնար տեսնել ուրիշներունը»:

ԶԵՆՈՐ ՔԷՆՅ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

ԿԱՐԵԼԻ ԶԷ ԶՆՋԵԼ

Մեծն Նափոլէոն՝ բարկութեան մէկ նուաշին՝ սպառնաց եկեղեցիները փակել եւ հալածել հոգեւորականութիւնը:

Բարեկամ եպիսկոպոս մը մօտեցաւ իրեն ու մտերմաբար այսպէս խօսեցաւ.

- Վեհափառ Տէր, ի գուր տեղ՝ դուք ձեզ անհանգիստ կ'ընէք, որովհետեւ, ինչ գորութիւն ալ գործածէք, պիտի չյաջողիք ձեր նպատակին մէջ: Մենք, մեղաւոր եկեղեցականներս՝ մեր բարոյական սայթաքումներով, մեր գործած ծանր սխալներով, իրարու հանդէպ մեր սնուցած նախանձներովը եւ խուլ պաշարներովը, այս եկեղեցին՝ երկու հազար տարիէ ի վեր չկրցանք ՆԵՐՍԷՆ քանդել, ինչպէս դուք այսքան կարճ ժամանակի մէջ կրնաս ԴՈՒՐՍԷՆ զայն քանդել:

«Մանրավէպեր»

Վարդան Ա. Զինյ. Տիպկերեան